ԳԱԲՐԻԷԼ ՎՐԴ. Մբ.— Նւ. Տիգրանակերտի (1765-1774), յետոյ եպս.:

ԳԱԲՐԻԷԼ ՎՐԴ. ՄԱԼԽԱՍԵԱՆ, ՊՈԼՍԵՑԻ, Մբ.—Ծ. 1879ին, Ձս. 1922ին, Լս. Ս. Յարութեան, Բեթղեհէմի և Ս. Յակոբի եկեղեցիներուն մէջ, այլ և այլ ժամանակներ:

ԳԱԲՐԻԷԼ ՎՐԴ. ՊՈՒՐՍԱՑԻ, Մբ.—1768ին:

ԳԱԲՐԻԷԼ ՎՐԴ. ՍՏԵՓԱՆԵԱՆ, ՄԱՐՄԷՏՑԻ (Վան), Մբ.— 1855ին:

ԳԱԲՐԻԷԼ ՎՐԴ. ՎԱՆՑԻ, Մբ.—ՏԴ. (1852-53) ՏԴ. բ. անգամ (1855-65). 1865ին կը վախճանի Դամասկոսի մէջ: 1860ի հրդեհէն վերջ, կը վերաշինէ Դամասկոսի Ս. Սարգիս եկեղեցին, բայց նորոգ շինուածը կը փլչի և յաջորդին կողմէն կը վերաշինուի 1866ին: Գաբրիէլ վրդ.ի գերեզմանը կը գտնուի Դամասկոսի Ս. Սարգիս եկեղեցիին գաւիթը. տապանաքարը արձանագրութիւն չունի:

ԳԱԲՐԻԷԼ ՎՐԴ. Մբ.—Փոխանորդ Ս. Յակոբի վանքին, կը նորոգէ 1353ին Ս. Փրկչի վանքը, ըստ հէօճէթի, (ԺՊԵ. Ա. Հատոր էջ 210).

ԳԱԲՐԻԷԼ ՎՐԴ.—ՓՈԽԱՆՈՐԴ. Աթոռակալ, Նւ. Գրիգոր պտրք. Շղթայակրի ժամանակ, Մբ. 1740ին: (ՄՁ. թ. 503) իր յիշատակներու մասին (ՄՁ. թ. 532):

ԳԱԼՈՒՍՏ ԱԲ. Մբ.—(ՄՁ. թ. 7) ձեռագրին մէջ ունի ինքնագիր յուշագրութիւն մը «ի թվին Հայոց ՌՄԻԶ (=1777) եկեղեցու տօնին հարեղոյ օրհնուեցայ եկի ի սբ. Ծնունդս որ անուն իմ հարցանէ ձեր ծառայ Գալուստ է աղաչեմ զձեզ մէկ բերան ողորմի ասէք իմ հոգւոյս եղէն»:

ԳԱԼՈՒՍՏ ՊԱՅԱՋԻՏՑԻ.—Բրձ. 1841ին, իր ծախքով տպագրել կուտայ Արարողութիւն Սրբոյ Աթոռոյս Երուսաղեմի տետրակը:

ԳԱԼՈՒՍՏ ՍՐԿ. ՊՈԼՍԵՑԻ. — 1775ին ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը. Գալուստ սրկ. ձեռագրաց յիշատակարաններուն մէջ կը հաղորդէ թէ ինքը Երուսաղէմ եկած ատեն՝ ականատես եղած է Եգիպտացի Ապու Տահապի յարձակումներուն, որ տեղի ունեցած են 7 մայիս 1775, Ս. Խաչի երեւման տօնի օրը: